ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/197

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ՝

Ա. Աղաբաբյանի (լիազորագիր, տրված՝ 20.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20756-2019 գրությամբ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.12.2019թ. թիվ Ն/17-2/40391-2019 և 13.12.2019թ. թիվ 26/26-1/20756-2019 գրություններով նախաձեռնել է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ»

ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/197 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 09.12.2019թ. թիվ Ն/17-2/40391-2019 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից մեկի՝ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև նշված չի եղել լիազորվողի իրավունքը՝ մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու համար: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին ծանուցվել է առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, սակայն վերջինս չի շտկել այն՝ ներկայացնելով համապատասխան լիազորագիրը՝ առանց էլեկտրոնային թվային ստորագրության առկայության:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/197 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ Ն/17-2/40391-2019 և 13.12.2019թ. թիվ 26/26-1/20756-2019 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես

գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև նշված չէ լիազորվողի իրավունքը Ընթացակարգին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու համար:

Ընկերությունը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունը. Ընկերությունը ներկայացրել է լիազորագիր, որտեղ նշված է լիազորվողի իրավունքը՝ Ընթացակարգին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու համար, սակայն լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հրավերով սահմանվել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այսպիսով՝ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի հայտում ներառված լիազորագիրը հաստատված է եղել «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Առաքելյանի ստորագրությամբ և կնքված է եղել Ընկերության կնիքով:

Որպես շտկում ներկայացված լիազորագիրը նույնպես ներկայացվել է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Առաքելյանի ստորագրությամբ և Ընկերության կնիքով կնքված, սակայն հաստատված չի եղել նույն լիազորագրի համաձայն Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից կազմված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորությամբ օժտված Արման Ասմանգուլյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս տեսանկյունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը **տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:**

Այսպիսով՝ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Առաքելյանի կողմից Արման Ասմանգուլյանին տրված լիազորագիրը հանդիսացել է այն փաստաթուղթը, որի հիման վրա Արման Ասմանգուլյանին իրավունք է վերապահվել Ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից հաստատման ենթակա փաստաթղթերը: Այսինքն, նշված փաստաթղթի վրա դրված Ընկերության տնօրենի ստորագրությունը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, արդեն իսկ վավեր է դարձնում հիշյալ

փաստաթուղթը և դրա վրա լիազորվողի էլեկտրոնային թվային ստորագրության բացակայությունը չի կարող դիտվել որպես լիազորագրի ոչ պատշաճ համարվելու հիմք, քանի որ լիազորագիրը պետք է տրվի այն լիազորողի անունից և հաստատվի հենց վերջինիս ստորագրությամբ, ինչը և արվել է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագրրի դեպքում: Հետևաբար, նման պայմաններում, գտնում եմ, որ լիազորագրի վրա լիազորվողի էլեկտրոնային թվային ստորագրության բացակայությունը չի կարող դիտվել որպես Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստի արձանագրման հիմք:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20756-2019 գրությամբ «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**